ՏԵՂԵԿԱՆՔ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 4. Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության լիազոր մարմնի գործառույթները

Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության լիազոր մարմնի գործառույթներն են՝

1. մեկ պատուհանի սկզբունքով ներդրումային ծրագրերի պետական աջակցության իրականացումը

2. սույն օրենքով սահմանված չափորոշիչներին բավարարող ներդրումային ծրագրերի իրականացման ողջ շղթայի ընթացքում պետական կառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներդրումային ծրագրի իրագործման շրջանակներում պարտականությունների կատարման ~~համակարգման եւ պետական վերահսկողության իրականացումը~~համակարգումը, այդ թվում՝ հողի նպատակային նշանակության փոփոխության, շինարարության թույլտվության, նախագծային փաստաթղթերի հաստատման, օբյեկտի նշանակության, անշարժ գույքի ձեռքբերման, արժեթղթերի եւ պարտատոմսերի ձեռքբերման, նոր կազմակերպության ստեղծման, գործող կազմակերպության վերակազմակերպման, լիցենզավորման եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումային ~~գործընթացների նկատմամբ~~ծրագրերի իրականացման գործընթացներում:

3. ներդրումային ծրագրի իրականացման գործընթացում պետական այլ մարմիններին ծրագրի իրականացմանն առընչվող դիմումների ներկայացումը եւ դրանց կատարման ընթացքի վերահսկումը

4. ներդրումային ծրագրերի էլեկտրոնային դիտանցման միասնական համակարգի կառավարումը: